



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 21 » « դեկտեմբեր » 2022 թվական N 2786 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱԴԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N 427 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Արթուր Էդմոնդի Խաչատրյանը (անձնագիր՝ AP 0685719, տրված՝ 28.12.2016 թվականին, 064-ի կողմից) Հայաստանի Հանրապետության Գյումրու քաղաքապետի 1997 թվականի հունիսի 19-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 427 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու խնդրանքով:

Որոշման մեջ տեղի են ունեցել վրիպակներ՝ մասնավորապես որոշման, որոշում եմ մասի 142-րդ կետի 1-ին ենթակետում՝ «Խաչատրյան Ժասմենա Միհրանի» անվանման մեջ անունը՝ «Ժասմենա»-ի փոխարեն գրվել է «Ժասմենա» (հիմք՝ մահվան վկայական՝ ԱԲ N^o 005565, տրված՝ 2009 թվականի հուլիսի 09-ին, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից):

Որոշման, որոշում եմ մասի 142-րդ կետի 3-րդ ենթակետի՝ «Խաչատրյան Տիգրան» անվանման մեջ՝ հայրանունը՝ «Էդմոնդ»-ի բաց է թողնվել, պետք է նշված լիներ՝ «Խաչատրյան Տիգրան Էդմոնդի» (հիմք՝ անձնագիր՝ AU0368642, տրված 26.07.2021 թվականին 064-ի կողմից, վարորդական իրավունքի վկայական՝ RG 863124, տրված՝ ՀՀ Ոստիկանության կողմից):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, 1-ին մասի, 1-ին կետով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Արթուր Էդմոնդի Խաչատրյանի 2022 թվականի դեկտեմբերի 14-ի դիմումը՝ (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված՝ թիվ N 23756 թվագրությամբ)՝ **որոշում եմ.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 1997 թվականի հունիսի 19-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» թիվ N 427 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1. Որոշման 142-րդ կետի 2-րդ ենթակետում՝ «Խաչատրյան Ժասմենա Միհրանի» անվանման մեջ՝ «Ժասմենա» բառը փոխարինել «Ժասմեն» բառով:

2. Որոշման 142-րդ կետի 3-րդ ենթակետում՝ «Խաչատրյան Տիգրան» անվանման մեջ կատարել լրացում՝ ավելացնելով «Էդմոնդի» բառը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արթուր Էդմոնդի
Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



21.12.2022

x 

Վ.ՍԱՄՍՈՂՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


<< 21 >> 2022 թվականի N 2785-Ա

«ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ
ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արթուր Կարապետի Վարդանյանի 2022 թվականի դեկտեմբերի 20-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի փորձագետ Արթուր Կարապետի Վարդանյանին տրամադրել 2021 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված մասը՝ 2022 թվականի դեկտեմբերի 30-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 5 աշխատանքային օր՝ 2022 թվականի դեկտեմբերի 30-ից մինչև 2022 թվականի հունվարի 09-ը ներառյալ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Կարապետի Վարդանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



21.12.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Գաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 21 » դեկտեմբերի 2022 թվականի N 2784-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐԱՐԱՏ ՍԱՆԱՍԱՐԻ, ՕԼԳԱ ՎԱՍԻԼԵՎՆԱ, ՍԱՆԱՍԱՐ ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ՎԱՀԱՆ ԱՐԱՐԱՏԻ ԳԱՍԱԿԱՐՅԱՆՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԵՐԳՆԵՆԻ ՓՈՂՈՑ N 1Ա ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 188.82 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՅՎԱԾ 2(ԵՐԿՈՒ) ՊԱՏՈՒՀԱՆԸ ԵՎ 2(ԵՐԿՈՒ) ԴՈՒՌԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Արարատ Սանասարի, Օլգա Վասիլեվնա, Սանասար Արարատի և Վահան Արարատի Գասպարյաններին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գերգենի փողոց N 1ա հասցեի հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնական կառուցվել է 57.85 (հիսունյոթ ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, իսկ 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնական կառուցվել է 130.97 (հարյուր երեսուն ամբողջ ինսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Սանասար Արարատի Գասպարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 և 22.1 կետերի, հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառույցը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Արարատ Սանասարի, Օլգա Վասիլեվնա, Սանասար Արարատի և Վահան Արարատի Գասպարյաններին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գերգենի փողոց N 1ա հասցեի տան հողամասում ինքնական կառուցված 57.85 (հիսունյոթ ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:

2. Քաղաքացիներ Արարատ Սանասարի, Օլգա Վասիլեվնա, Սանասար Արարատի և Վահան Արարատի Գասպարյաններին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գերգենի փողոց N 1ա հասցեի տան հողամասում ինքնական կառուցված 164.96 (հարյուր վաթսուներորդ ամբողջ ինսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (130.97 (հարյուր երեսուն ամբողջ ինսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները, ինքնական բացված 2(երկու) պատուհանը և 2(երկու) դուռը ճանաչել օրինական, յուրաքանչյուր բնակալ է գանձման 391311/երեք ինսունմեկ հազար երեք հարյուր տասնմեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Արարատ Սանասարի, Օլգա Վասիլեվնա, Սանասար Արարատի և Վահան Արարատի Գասպարյաններին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



20.12.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 21 » դեկտեմբեր 2022 թվականի N 2783 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՐՅԱՆ ՓՈՂՈՑ N 18/1
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 83.69 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (78.69 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ)
ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, 83.69 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍԵՐԳԵՅ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՀԱԿԱՆՈՒԹ ԳԱՐԻԵԼՅԱՆԻՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ
ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Բորյան փողոց N 18/1 հասցեի 83.69 (ութսուններեք ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի շինությունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 19092022-08-0032 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը համապատասխանում է Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 11-ի N 212-Ա որոշումը, հիմք ընդունելով քաղաքացի Սերգեյ Մինասյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի հունվարի 12-ին N 519 թվագրմամբ):

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Բորյան փողոց N 18/1 հասցեի 83.69 (ութսուններեք ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (78.69 (յոթանասուներեք ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 494356 (չորս հարյուր ինսուսուսչորս հազար երեք հարյուր հիսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի շինությունն ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Սերգեյ Մինասյանին և Սահականուշ Գաբրիելյանին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Բորյան փողոց N 18/1 հասցեի 83.69 (ութսուններեք ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 371750 (երեք հարյուր յոթանասուներեք հազար յոթ հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Սերգեյ Մինասյանին և Սահականուշ Գաբրիելյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացիներ Սերգեյ Մինասյանը և Սահականուշ Գաբրիելյանը պարտավոր են 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Սերգեյ Մինասյանին և Սահականուշ Գաբրիելյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացիներ Սերգեյ Մինասյանի և Սահականուշ Գաբրիելյանի միջոցների հաշվին:



Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Գաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 21 » դեկտեմբեր 2022 թվականի N 2782-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱԻՂԱ ԱՇՈՏԻ ԷԼՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ 1-ԻՆ ՇԱՐՔ N 3 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ 78.61 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՅՎԱԾ 1(ՄԵԿ) ՊԱՏՈՒՀԱՆԸ ԵՎ 1(ՄԵԿ) ԴՈՒՌԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿԱԾ 2(ԵՐԿՈՒ) ՊԱՏՈՒՀԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 28.51 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Աիդա Աշոտի Էլոյանին պատկանող Գյումրի քաղաքի Կարեն Դեմիրճյան փողոց 1-ին փակուղի 1-ին շարք N 3 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործում է 28.51 (քանութ ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր, մակերեսով հողամաս, սեփական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնական կառուցվել է 76.95 (յոթանասունվեց ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, իսկ 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնական կառուցվել է 1.66 (մեկ ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպ, ինքնական բացված է 1(մեկ) պատուհան և 1(մեկ) դուռ, ինքնական փակված է 2 (երկու) պատուհան:

Քաղաքացի Աիդա Աշոտի Էլոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և սեփական հողամասում ինքնական կառուցված բնակելի շինությունների նկատմամբ իրենց սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 և 22.1 կետի և 18-րդ կետի դ) ենթակետի, հիմք ընդունելով քաղաքացի Աիդա Աշոտի Էլոյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականին N 16291 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Աիդա Աշոտի Էլոյանի (ծնված 1961 թվականի նոյեմբերի 16-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Կարեն Դեմիրճյան փողոց 1-ին փակուղի 1-ին շարք N 3 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 28.51 (քանութ ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Քաղաքացի Աիդա Աշոտի Էլոյանին պատկանող Գյումրի քաղաքի Կարեն Դեմիրճյան փողոց 1-ին փակուղի 1-ին շարք N 3 հասցեի տան հողամասում ինքնական կառուցված 76.95 (յոթանասունվեց ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
3. Քաղաքացի Աիդա Աշոտի Էլոյանին պատկանող Գյումրի քաղաքի Կարեն Դեմիրճյան փողոց 1-ին փակուղի 1-ին շարք N 3 հասցեի տան հողամասում ինքնական կառուցված 1.66 (մեկ ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը, ինքնական բացված 1(մեկ) դուռը և 1(մեկ) պատուհանը և ինքնական փակված 2(երկու) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 13108/տասերեք հազար մեկ հարյուր ութ/ Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Աիդա Աշոտի Էլոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի N 2345-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:



20.12.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի 2022 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 21 » դեկտեմբեր 2022 թվականի N 2781-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ՄԱՐՏԻՆԻ ՎԱՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ N38 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ 61.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (49.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ)
ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Աշոտ Մարտինի Վարոսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մեքենավարների փողոց N38 հասցեի տան հողամասում ինքնական կառուցվել է 61.0 (վաթսունմեկ) քառակուսի մետր արտաքին (49.8(քառասունինը ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակ, որը կառուցված է 2001 թվականի մայիսի 15-ից հետո :

Քաղաքացի Աշոտ Վարոսյանը դիմել է նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված <<ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման >> կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով քաղաքացի Աշոտ Վարոսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականին N19364 թվագրմամբ):

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Աշոտ Մարտինի Վարոսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մեքենավարների փողոց N38 հասցեի տան հողամասում ինքնական 61.0 (վաթսունմեկ) քառակուսի մետր արտաքին (49.8(քառասունինը ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 120109 (հարյուր քսան հազար հարյուր ինը) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:



20.12.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022 թ. ք.Գյումրի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » դեկտեմբեր 2022 թվականի N 2780 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՆԴՐԵՅ ԱՐԳԱՐԻ ԱՐՐԱՀԱՄԱՅՆԻՆ ԵՎ ԱՐԱՔՍԻ ՌՈՒՔԵՆԻ ԹՈՎՄԱՅԱՆԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇՐՋԱՆՑՈՂ
ՃԱՆԱՊԱՐՀ N 32 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 47.05 ՔԱՌԱՍՈՒՆՅՈՒՆ ՄԵՏՐ
ԱՐՏԱՔԻՆ (40.84 ՔԱՌԱՍՈՒՆՅՈՒՆ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 2(ԵՐԿՈՒ) ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 3(ԵՐԵՔ) ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Անդրեյ Արգարի Աբրահամյանին և Արաքսի Ռուբենի Թովմայանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ սեփականության իրավունքի վկայականի N 2885853 տրված 22.11.2011թ.) Գյումրի քաղաքի Հարավ-արևելյան շրջանցող ճանապարհի N 32 հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնական կառուցված է 47.05 (քառասունյոթ ամբողջ հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (40.84 (քառասուն ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություններ, ինքնական փակվել է 2(երկու) և ինքնական բացվել է 3(երեք) պատուհաններ:

Քաղաքացի Անդրեյ Արգարի Աբրահամյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Հինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 կետի և 18-րդ կետի դ) ենթակետի, հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառույցը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Անդրեյ Արգարի Աբրահամյանին և Արաքսի Ռուբենի Թովմայանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հարավ-արևելյան շրջանցող ճանապարհի N 32 հասցեի հողամասում ինքնական կառուցված 47.05 (քառասունյոթ ամբողջ հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (40.84 (քառասուն ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները, ինքնական փակված 2(երկու) և ինքնական բացված 3(երեք) պատուհանները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 120547 /հարյուր քսան հազար հինգ հարյուր քառասունյոթ/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Անդրեյ Արգարի Աբրահամյանին և Արաքսի Ռուբենի Թովմայանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » քննարկվել է 2022 թվականի N 2779-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՐԱԿ-ԱՐԵՎԵԼՅԱՆ
ՇՐՋԱՆՑՈՂ ՃԱՆԱՊԱՐՀ N 32 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 57.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ
ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՑՎԱԾ 19.36
ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐԻՍՊԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Հարավ-արևելյան շրջանցող ճանապարհի N 32 հասցեին կից գտնվող ինքնակամ զբաղեցրած 57.9 (հիսունյոթ ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 19.36 (տասնինն ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպներ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Հարավ-արևելյան շրջանցող ճանապարհի N 32 հասցեին կից գտնվող ինքնակամ զբաղեցրած 57.9 (հիսունյոթ ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 19.36 (տասնինն ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպները համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ոտղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Անդրեյ Աբգարի Աբրահամյանին և Արաքսի Ռուբենի Թովմասյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և ճարտարապետության բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



20.12.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի 2022 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » սեպտեմբեր 2022 թվականի N 2778-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28 -Ի N 2347-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի <<Քաղաքացի Հրաչյա Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գորկու փողոց N 109/4 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 50,17 քառակուսի մետր արտաքին (43,96 քառակուսի մետր ներքին) մակերեսով շվաքարանը օրինական ճանաչելու մասին>> N 2347-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 17/11/2022 թվականի N Կ-17112022-08-0114 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի <<Քաղաքացի Հրաչյա Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գորկու փողոց N 109/4 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 50,17 քառակուսի մետր արտաքին (43,96 քառակուսի մետր ներքին) մակերեսով շվաքարանը օրինական ճանաչելու մասին>> N 2347-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) նախաբանում, որոշման 1-ին կետում <<հինգ հարյուր երեսունմեկ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական>> բառերը փոխարինել <<հիսուն ամբողջ տասնյոթ հարյուրերորդական>> բառերով.

2) նախաբանում, որոշման 1-ին կետում <<չորս հարյուր տասներկու ամբողջ իննսունվեց հարյուրերորդական>> բառերը փոխարինել <<քսուս ամբողջ իննսունվեց հարյուրերորդական>> բառերով:



Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի 2022 թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » դեկտեմբեր 2022 թվականի N 2474

**ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՄԼԵՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐՔԱՆՑՔ N 31 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 52,39 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻՆ
ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԻՑ ԱՎԵԼ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 57,16 ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Համլետ Հովհաննիսյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Տերյան փողոց 1-ին նրբանցք N 31 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված է 52,39(հիսուներկու ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություն և օրինական հողամասին կից ավել զբաղեցված է 57,16(հիսունյոթ ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառ.մ մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Հ.Հովհաննիսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի հիմք ընդունելով քաղաքացի Հ.Հովհաննիսյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվ հունիսի 16-ին N 10614 թվագրմամբ)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Համլետ Արամի Հովհաննիսյանի (ծնված 16.03.1961թ.) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Տերյան փողոց 1-ին նրբանցք N 31 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 57,16(հիսունյոթ ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության նկատմամբ:
2. Քաղաքացի Համլետ Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Տերյան փողոց 1-ին նրբանցք N 31 հասցեի տան հողամասում կառուցված 52,39 (հիսուներկու ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի ճանաչել օրինական:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հ.Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

20.12.2022



Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » դեկտեմբեր 2022 թվականի N 2746-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՌՈՂԱ ՍՈՒՔԻԱՅԱՆԻՆ ԵՎ ՊԱՐԳԵՎ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՄԱՏԵՂ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՆԵՍՕՂԱՅԱՆ
ՓՈՂՈՑ 18 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 119,35 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ
ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Ռոգա Սուքիայանին և Պարգև Գրիգորյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հանեսոլլյան փողոց N 18 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված է 119,35(հարյուր տասնինը ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական)քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություններ :

Քաղաքացի Պարգև Գրիգորյանի լիազորված անձ. Մարիամ Մաթևոսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ (մուտքագրված համայնքապետարանում 23.06.2022 N 10992 թվագրմամբ) նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ նշված հողամասերը ՀՀ Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոբեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված, Գյումրի համայնքի ավագանու 2022թ. հունիսի 22-ի N124-Ա որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծի հեռանկարային տարածական զարգացման գծագրով հանդիսանում են բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատում գործառնական նշանակության հող:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.կետի, հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Ռոգա Սուքիայանին և Պարգև Գրիգորյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հանեսոլլյան փողոց N 18 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 119,35(հարյուր տասնինը ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 276415 (երկու հարյուր յոթանասունվեց հազար չորս հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



20.12.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » դեկտեմբեր 2022 թվականի N 2775

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԶԻՎԱՆՈՒ ՓՈՂՈՑ N74 ՀԱՍՑԵԻ 117.05 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 181.76 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (132.43 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Զիվանու փողոց N74 հասցեի 117.05(հարյուր տասնյոթ ամբողջ հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 181.76(հարյուր ութսունմեկ ամբողջ յոթանասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (132.43 (հարյուր երեսուներկու ամբողջ քառասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Սերյոժա Թադևոսի Մուրադյանը :

